



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 հունիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Տիգրան Սահակյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Տիգրան Սահակյանը 2017թ. մայիսի 22-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով իր ձևակերպումների ոչ բավարար ճշգրտության պատճառով հնարավորություն է տալիս դատարաններին տարբեր կերպ մեկնաբանել օրենքի նույն դրույթը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Ըստ դիմողի կարծիքի՝ վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, թերի է ձևակերպված, ինչն էլ հնարավորություն չի ընձեռում իրավաբանական և ֆիզիկական անձանց կանխատեսելու իրենց գործողությունները՝

իրավունքների դատական պաշտպանության ոլորտում, ինչպես նաև դատարաններին հնարավորություն է տալիս սահմանափակել անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց: Մասնավորապես, դիմողի փաստարկներն առ այն, որ «...ՀՀ վարչական դատարանը և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը խնդրո առարկա դրույթը տարբեր կերպ են հասկացել, մեկնաբանել... ու կիրառել», իրականում ուղղված են վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման քողի ներքո դրա կիրառման իրավաչափության հարցին: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ, եզրափակիչ փուլերից: Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նշված օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ): Վարչական վարույթը եզրափակվում է

վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Նշված նորմերի համակարգված վերլուծությունը հանգեցնում է եզրակացության, որ այն դեպքերում, երբ վարչական վարույթը եզրափակվում է վարչարարության (հետևաբար՝ նաև այդ ընթացքում իրականացվող գործողությունների) արդյունքում ընդունված վարչական ակտով, ապա անձի համար իրավական հետևանքներ կարող է առաջացնել միայն այդ ակտը, այլ ոչ թե այդ ակտի ընդունմանն ուղղված գործողությունները, քանի որ անձի ենթադրյալ իրավունքները խախտող ակտի վիճարկումն արդեն իսկ ենթադրում է, որ դատարանն այս պարագայում անպայմանորեն պետք է անդրադառնա և քննարկման առարկա դարձնի ակտի ընդունմանն ուղղված բոլոր գործողությունների իրավաչափության հարցը, ինչի արդյունքում էլ, ի վերջո, կլուծվի վարչական ակտի ճակատագիրը՝ առանց լրացուցիչ այլ պահանջների ներկայացման: Այսինքն, առկա է անձի իրավունքների ենթադրյալ խախտումների պաշտպանության՝ օրենքով սահմանված հստակ եղանակ, այն է՝ վարչարարության հետևանքով կայացվելիք վերջնական վարչական ակտի վիճարկում, եթե անձը կգտնի, որ դրանով խախտվել են իր իրավունքները:

Հետևաբար, վերոշարադրյալի համատեքստում դիմողի փաստարկներն առ այն, որ «...եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը դատարանին հնարավորություն է տալիս այն մեկնաբանել այնպես, որ այդ նորմով սահմանափակվում է անձի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներից օգտվելու հնարավորությունն այն դեպքում, երբ անձը այլևս հնարավորություն չունի իր իրավունքները պաշտպանել այլ կերպ, քան այդ միակ հիմքով, ապա օրենքի նման մեկնաբանության հնարավորությունը և դրանով սահմանվող արգելքը հակասում են ՀՀ Սահմանադրության նորմերին...», ակնհայտ անհիմն են, սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն

հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջն ինքնանպատակ չէ, և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, պահանջ, որին չի բավարարում Սահմանադրական դատարան ներկայացված խնդրո առարկա անհատական դիմումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Տիգրան Սահակյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 հունիսի 2017 թվականի

ՍԴԴԿՈ/2-13